Մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի Մաթեմատիկա (18 դասաժամ), Հասարակագիտություն (7 դասաժամ) Կերպարվեստ, (8 դասաժամ), Երաժշտություն (8 դասաժամ), Տեխնոլոգիա (7 դասաժամ), Հայոց լեզու և գրականություն (17 դասաժամ), Ռուսաց լեզու (2 դասաժամ), առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
-դիմում (ձև 1),
-1լուսանկար 3x4չափի,
-բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **29. 08. 2024թ. ից մինչև 11. 09. 2024թ-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը **10:00-ից 15:00-ը**, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ.-ի սեպտեմբերի 17-ին՝ ժամը 14:00-ին**, Գուսանագյուղի միջնակարգ դպրոցում,

հասցե՝ գ. Գուսանագյուղ փողոց 1, շենք 8:
Տեղեկություններին համար զանգահարել **093 62 45 52** հեռախոսահամարով: